5064

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Հակոբ Սիմիդյան

«07» 05 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 109 - 25

Նախաձեռնող՝ *Անահիտ Արշակյան*
Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նորապատ բնակավայր 2-րդ փ, 4-րդ փ.

Գործունեությունը՝ *Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 6-րդ փողոցի 17 հողամաս հասցեում հեղուկ վառելիքի կայանի կառուցում*
Արմավիրի մարզ

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 109 - 25

« 07 » մայիս 2025թ.

Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 6-րդ փողոցի 17 հողամաս հասցեում հեղուկ վառելիքի (բենզալցակայան) լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	Քաղաքացի Անահիտ Արշակյան
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Նորապատ բնակավայր

Ներածական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրում, մոտակա շենք շինություններից 65 մ-67 մ հեռավորությունների վրա: Լիցքավորման կայանի ստորգետնյա հեղուկ վառելիքի պահեստարանից մինչև ճանապարհի եզր հեռավորությունը կազմում է 35 մ:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 6 -րդ կետի բ. ենթակետի:

Նկարագրական մաս. Նախագծի մշակման համար հիմք են հանդիսացել 04-075-0070-0007 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N25112021-04-0094 վկայականը, 2024 թվականի մայիսի 3-ին Արմավիրիի մարզի Մեծամոր համայնքի կողմից տրված N 78 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Նախագծային աշխատանքներն իրականացվել են քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մայիսի 22-ի N 04-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի (այսուհետ՝ Նորմ) պահանջներին համապատասխան, հաշվի են առնվել նորմով սահմանված սանիտարական, նախադպրոցական հաստատություններից, հանրակրթական, գիշերօթիկ դպրոցներից, ստացիոնար բուժական

հիմնարկների հողամասերի սահմաններից, բնակելի, հասարակական շենքերից, ճանապարհից հեռավորությունները: Նախատեսվող գործունեության տարածքը ազատ է կառուցապատումից: Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի հողամասի մակերեսը կազմում է 1616 մ², որում կառուցապատման մակերեսը կկազմի 223.2 մ², կառուցվող շինությունների ընդհանուր մակերեսը՝ 149.6 մ², օպերատորական, հանգստի սենյակի, սանհանգույցների համար հատկացված տարածքը կկազմի 64.0 մ², լցակետի մակերեսը հաշվարկված է 73.6 մ²: Հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանում նախատեսված է (Նորմի 0.1 հա պահանջին համապատասխան) 1 բաշխման կետ, ստորգետնյա հեղուկ վառելիքի պահեստարաններ՝ 4 հատ 8 մ³ ծավալով, 120 մ² մակերեսով: Կայանի արտադրողականությունը նախատեսված է ժամում՝ 6-10 ավտոմեքենա: Կայանում նախատեսվում է մեկ լիցքավորման աշտարակ, 4 ճկափողով:

Կանաչապատման մակերեսը կկազմի 400 մ², բարեկարգման մակերեսը՝ 992.8 մ²:

Համաձայն նախագծի հեղուկ վառելանյութի լիցքավորման կայանի մուտքերն ու ելքերը տեղադրվելու են միմյանցից անջատ: Կայանի տարածքը տարանջատված կլինի ճանապարհի երթևեկելի մասից 3 մ լայնությամբ անվտանգության կղզյակով:

Արտաքին հրդեհաշիջման աշխատանքների համար նախատեսվում են հրշեջ հիդրանտներ:

Բնակչության սակավաշարժ խմբերի համար նախատեսվում են թեքահարթակներ, կայանատեղի, սանհանգույց:

Շենքի երկաթբետոնե հիմնակմախքի տակ նախատեսված է իրականացնել 30Х40 սմ չափերով մինածույլ ժապավենային հիմքեր "B20" դասի ծանր բետոնից: Սյուները նախատեսված է իրականացնել միածույլ երկաթբետոնից՝ 40x40 սմ չափերով "B20" դասի ծանր բետոնից:

Հեղուկ վառելիքի լիցքավորման կայանի շինարարության և շահագործման փուլի ջրամատակարարումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն՝ տարածքից մոտ 100մ հեռավորության վրա գտնվող գործող ջրագծից, 32 մմ տրամագծի խողովակով:

Կենցաղային կեղտաջրերն ինքնահոս հեռանալու են արտաքին ցանցով դեպի դրսի դիտահոր: Կոյուղու բակային ցանցը պոլիէթիլենային PVC տիպի խողովակներից է: Բակային ցանցի միջոցով կեղտաջրերն ուղղվելու են 8 մ³ ծավալով կեղտաջրերի անջրթափանց հոր, որտեղից հատուկ մեքենաներով կհեռացվեն կոյուղու ցանց:

Նախագծի էլեկտրամատակարարման մասը մշակված է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն:

Շինարարության փուլում շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Շինարարության և շահագործման փուլում առաջացող կենցաղային թափոնները պայմանագրային հիմունքներով կտեղափոխվեն աղբավայր:

Հողային աշխատանքների ժամանակ նախատեսվում է, 1200մ³ ծավալով հողային հանույթ, որից 300 մ³ ծավալով հողային զանգվածը հետլիցք կարվի, իսկ ավելացված 900 մ³ ծավալով հանույթը կպահվի շինհրապարակում, ապա կտեղափոխվի Արմավիրի համայնքապետարանի հետ համաձայնեցված վայր:

Կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու և տարածքի ջրցանի համար ջրամատակարարումը կիրականացվի «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

Շինարարության փուլում խմելու որակի ջուրը շինհրապարակ կմատակարարվի ջրի տարաներով, կամ պայմանագրային հիմունքներով:

Կանաչապատվող 400 մ^2 մակերեսով տարածքի ոռոգման համար նախատեսվում է կազմակերպել ցնցուղային ոռոգման ցանց: Կանաչապատման աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ 200 մ^3 ծավալով հողաբուսաշերտի ձեռքբերման վայրը կհամաձայնցվի տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,

-շինարարական աշխատանքների, փոշեգոյացնող աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան, ջրցան է իրականացվելու նաև ավելցուկային հողային զանգվածի վրա,

-շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում,

-շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով,

-օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

-պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,

-շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,

- սորուն նյութերի պահեստները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելելու է փոշու տարածումը,

-կանաչապատումն իրականացվելու է առաջնորդվելով Կառավարության 2018թ փետրվարի 8-ի N 108-Ն որոշման դրույթներով,

-հակահրդեհային անվտանգության միջոցառումների ապահովման նպատակով տարածքում նախատեսվում է հրշեջ հիդրանտի տեղադրում,

-հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն է դարձվելու դրանց աղմուկի մակարդակի ցուցանիշներին,

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմմանն ուղղված մշտադիտարկումներ:

մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:

օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,

աղմուկի և թրթռման մակարդակի մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է մասնահանել 1320000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 6-րդ փողոցի 17 հողամաս հասցեում հեղուկ վառելիքի կայան կառուցելու վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Արմավիրի մարզի, Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախագծով նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն ինչպես նաև Արմավիրի մարզպետարանը և Մեծամորի համայնքապետարանը:

Ստացված դիտողություններով և առաջարկություններով հաշվետվությունը լրամշակվել է:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Մեծամորի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

5. Կառուցապատման աշխատանքների ժամանակ պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների ՀՀ օրենսդրությամբ սահմանված թույլատրելի մակարդակը:

6. Շահագործման ընթացքում հնարավոր պատահարները բացառելու և կանխարգելելու նպատակով ապահովել տեխնոլոգիական սարքավորումների, տեխնիկական միջոցների, օբյեկտի կառույցների, տեղակայանքների պարբերական տեխնկական զննումներ, ինչպես նաև կազմակերպել աշխատողների ուսուցում և որակավորման ստուգում:

7. Անհրաժեշտ է գործունեությունն իրականացնելիս առաջնորդվել Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N 28-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 32-01-2022 շինարարական նորմերի պահանջներով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Քաղաքացի Անահիտ Արշակյանի կողմից ներկայացված Մեծամոր համայնքի Նորապատ բնակավայրի 6-րդ փողոցի 17 հողամաս հասցեում հեղուկ վառելիքի (բենզալցակայան) լիցքավորման կայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի
ժամանակավոր պաշտոնակատար՝ Սևակ Մարկոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Գոհար Մինասյան